ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ՍՄԿԿ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԻ ԱՃԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԵՍՅԱՆ

Համաշխարհային սոցիալիզմի տեսության մեջ և պրակտիկայում վերջին շրջանում կարևոր նշանակություն ձեռք բերեցին սոցիալիստական հասարակարգի կառուցման հետ առնչվող հարցերը։ Դրանցից է զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցության ղեկավար դերի աճի հարցը, որի ուսումնասիրությունը և ընդհանրացումը հարաճուն նշանակություն է ստացել։

Դեպի կոմունիզմ սովետական հասարակարգի հաջող առաջընթացի հզոր միջոցը կոմունիստական կուսակցության գործունեությունն է, որը կոչված է «...կազմակերպելու և ուղղություն տալու նոր հասարակարգին, լինելու բոլոր աշխատավորների ու շահագործվողների ուսուցիչը, ղեկավարը, առաջնորդը...»[1]։ Անդրադառնալով կուսակցության ղեկավար դերի հարցին, Լ. Ի. Բրեժնևն ասել է. «Հանրահայտ է, որ դա հեղափոխական շարժման, նոր հասարակարգի կառուցման արմատական հարցերից մեկն է։ Այսօր նա դարձել է մարքսիստ-լենինյանների և ռևիզիոնիզմի տարբեր ձևերի ներկայացուցիչների միջև մղվող պայքարի հանգուցակետը»[2]։

Կուսակցության ղեկավար դերի մասին լենինյան ուսմունքը զարգացվեց ՍՄԿԿ XXV և XXVI համագումարների փաստաթղթերում ու որոշումներում։ Համագումարներում ընդգծվեց, որ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում կուսակցության ղեկավար դերը հասարակության կյանքում գնալով աճում է։ «Հատկապես հիմա,— նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXVI համագումարում,— սովետական ժողովրդի տպավորիչ նվաճումների լույսով, առավել խոր է ընկալվում լենինյան հայտնի բանաձևը՝ կուսակցությունը մեր դարաշրջանի միտքն է, պատիվն ու խիղճը»[3]։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում կուսակցության ղեկավար դերի աճը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով։ 1) Կոմունիստական կուսակցության՝ սովետական հասարակության ամենաառաջատար ուժ լինելով։ Թեև իր բնույթով ՍՄԿԿ-ն մնում է որպես բանվոր դասակարգի կուսակցություն, բայց զարգացած սոցիալիզմի պայմաններում այն դարձել է սովետական ամբողջ ժողովրդի կուսակցությունը։ 2) Կուսակցության ղեկա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 521։

2 «ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին», Երևան, 1971, էջ 161։

3 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 111։

վար դերի աճը պայմանավորող մյուս կարևոր հանգամանքը կապված է՝ այն բանի հետ, որ սոցիալիզմից դեպի կոմունիզմ մեր երկրի առաջընթացի ժամանակ է՛լ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերել սովետական հասարակական կյանքի բոլոր կողմերի գիտական ղեկավարումը։ 3) Կուսակցության ղեկավար դերի աճն օբյեկտիվ անհրաժեշտություն է, որ բխում է կոմունիստական շինարարության մասշտաբների ընդլայնումից, դրանց լուծման բարդություններից, աշխատավորական մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացումից։ 11-րդ հնգամյակի բարդ խնդիրները, որ առաջադրել է կուսակցության XXVI համագումարը, պահանջում են մշտապես կատարելագործել կուսակցական-կազմակերպական աշխատանքը։ Որքան արդյունավետ լինեն նրա ձևերը, բարձր՝ կազմակերպական, գաղափարական-քաղաքական աշխատանքների մակարդակը, այնքան ավելի ծանրակշիռ կլինեն նվաճումները կոմունիստական շինարարության մեջ։ 4) Կուսակցության ղեկավար դերի աճը պայմանավորված է ՍՄԿԿ գաղափարական աշխատանքների հետագա բարձրացմամբ։ Ընդ որում, առաջին պլան է քաշվել այնպիսի կարևոր ու բարդ խնդիր, ինչպիսին աշխատավորության կոմունիստական դաստիարակությունն է։ 5) Կուսակցության ղեկավար դերի աճը պայմանավորված է նաև սովետական դեմոկրատիայի՝ հասարակական ինքնավարության վերաճելու անհրաժեշտությամբ։ 6) Կուսակցության ղեկավար դերի աճը բխում է նաև նրա անդամների թվաքանակի ավելացումից ու մասսաների վրա նրա ազդեցության մեծացումից։ 7) ՍՄԿԿ ղեկավար դերի աճը պայմանավորված է նաև միջազգային իրադրությամբ, երկրի պաշտպանունակության ամրապնդման անհրաժեշտությամբ։ Ժամանակակից պայմաններում խիստ աճել են միջազգային հարաբերությունների շրջանակները ու նշանակությունը, ուժեղացել է միջազգային հարաբերություններում ՍՄԿԿ բազմապլանային գործունեությունը, կուսակցության ներքին զարգացման և արտաքին քաղաքական գործունեության փոխադարձ կապը։

Կուսակցության ղեկավար դերի աճը ավտոմատիկ, ինքնահոսի կարգով ընթացող պրոցես չէ։ Ղեկավարումը բազմաթիվ տարրերից է բաղկացած։ Այն սկսվում է քաղաքական ստրատեգիայի, կուսակցության քաղաքական գլխավոր ուղղության ու տակտիկայի մշակումից, ամեն մի պատմական փուլում շղթայի հիմնական օղակի որոշումից։ Այդ պրոցեսների զարգացման ընթացքում զարգանում է նաև ինքը՝ կուսակցությունը, ուժեղանում է նրա մարքսլենինյան կուփվածությունը, մարտունակությունը, բարձրանում նրա տեսական և պրակտիկ գործունեության մակարդակը։

ՍՄԿԿ XXV և XXVI համագումարները նշեցին սոցիալիզմի պայմաններում կուսակցության ղեկավար դերի աճն ապահովող հետևյալ գլխավոր միջոցները։ Կոմունիստական կուսակցության քաղաքական, գաղափարական և կազմակերպչական ներգործությունը մեր հասարակության զարգացման վրա ապահովելու համար նախ անհրաժեշտ է, որպեսզի կատարելագործվեն բուն կուսակցական աշխատանքի մեթոդները ու ձևերը, կուսակցական ղեկավարությունը ավելի ու ավելի դրվի գիտական հիմքի վրա։ Հետագա կատարելագործում է ստանալու հասարակական կյանքի նկատմամբ կուսակցական ղեկավարումը։ Կուսակցությունը մշտապես բարձրացնում է պետական և հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունը, դերն ու պատասխանատվությունն իրենց ֆունկցիաների կատարման հանդեպ։ Քանի որ հասարակության

կուսակցական ղեկավարման հասունությունը մեծապես կախված է մարդկանցից, ուստի աճում է կադրերի ընտրության չափանիշը, է՛լ ավելի է բարձրանում նրանց դաստիարակության և պատրաստման նկատմամբ հոգատարությունը և պահանջկոտությունը։ Նպատակասլաց ձևով կարգավորվում և բարելավվում են կուսակցության շարքերի համալրումը, կոմունիստների քաղաքական լուսավորության և դաստիարակության աշխատանքները։ ՍՄԿԿ-ն հետևողականորեն զարգացնում և կատարելագործում է ներկուսակցական կյանքի հարաբերությունների սիստեմը՝ կարևոր ուշադրություն դարձնելով կուսակցության որակական կազմի բարելավման վրա։ Իր գործունեության բոլոր փուլերում կուսակցությունը մշտապես հոգ է տարել, որպեսզի իր շարքերը համալրի առաջավոր, ավելի գիտակից բանվորներով։ Դա ՍՄԿԿ սոցիալական զարգացման սկզբունքային հարցն է։ Այդ նպատակով, կոնկրետ պատմական պայմաններին համապատասխան, կուսակցությունն օգտագործել է կազմակերպչական-քաղաքական բնույթի բազմատեսակ միջոցներ, այդ թվում և մասսայական միջոցառումներ, որոնք նախկինում անց էին կացվում այնպիսի պայմաններում, երբ սրված էին ներկուսակցական ու դասակարգային պայքարը, երբ ռազմական վտանգի վերացման համար պահանջվում էր բոլոր ուժերի համախմբում, կուսակցության շարքերի ամրապնդում։ Կուսակցության որակական կազմի բարելավման տեսակետից տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեն ՍՄԿԿ XXV և XXVI համագումարներում կուսակցության սոցիալական կազմի, աճի և ձևավորման վերաբերյալ կատարված հետևություններն ու ցուցումները։ Այդ հետևություններից մեկն այն է, որ ՍՄԿԿ-ն դարձել է ամբողջ ժողովրդի կուսակցություն։ Մեր հասարակության զարգացման, նրա սոցիալ-քաղաքական ու կուլտուրական կերպարանափոխման հետ միասին աճում և ամրապնդվում է կոմունիստների կուսակցությունը։ Վերջին տարիներին կուսակցական կազմակերպությունները զգալիորեն ուժեղացրել են կուսակցության մեջ առաջավոր բանվորների ընդունելության գործը։ Անցած 5 տարիներին ՍՄԿԿ-ի անդամների թիվն ավելացավ 1,8 միլիոնով, որից 1,5 միլիոնը բանվորներ են։ Ներկայումս ՍՄԿԿ անդամների ընդհանուր թվի (17 միլիոն 480 հազար) 43,4%-ը բանվորներ են, 12,8%-ը՝ կոլտնտեսականներ[4]։

ՍՄԿԿ-ի վրա այժմ անդրադառնում են նաև այլ փոփոխություններ, որոնք տեղի են ունենում հասարակության դասակարգային կառուցվածքում, ինչպես նաև յուրաքանչյուր դասակարգի ու խավի ներսում։ Մեր կուսակցության մեջ, օրինակ, աստիճանաբար կրճատվում է կոլտնտեսականների թիվը[5]։ Դա արդյունք է այն օբյեկտիվ, ռեալ փոփոխությունների, որոնք տեղի են ունենում գյուղատնտեսության մեջ։ Այսպես, եթե ամբողջ ազգաբնակչության թվում կոլտնտեսային գյուղացիությունը 1959 թ. կազմում էր 31,4%, ապա 1975 թ.՝ 17,1%[6]։ Դա տեղի ունեցավ շնորհիվ բազմաթիվ կոլտնտեսությունների սովխոզացման, գյուղատնտեսական արտադրության զարգացման, տնտեսության կոմպլեքսային մեքենայացման, որը շատ բանվորական ուժ ազատեց։

4 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 111։

5 «Актуальные вопросы политики КПСС». М., 1976, с. 304.

6 Նույն տեղում, էջ 305։

Մեր երկրի. քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում ընդգրկված են և ակտիվորեն աշխատում են նաև կանայք։ Տարեցտարի ավելանում է ՍՄԿԿ շարքերն ընդունվող կանանց թիվը։ Այսպես, օրինակ, ՍՄԿԿ XXIV և XXV համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում կուսակցության մեջ ընդունվեց 764 հազար կին, կամ նոր ընդունվածների 29,5%-ը։ Նրանք 1976 թ. կազմում էին բոլոր կոմունիստների մեկ քառորդը[7]։

Քանակական աճը դիտելով որպես ամբողջությամբ վերցրած կոմունիստական շինարարության դրական գործոն, կուսակցությունը երբեք էլ դրան վճռական նշանակություն չի տվել։ Նրա համար գլխավորը միշտ էլ եղել և մնում է կոմունիստների որակական կազմի ըստ ամենայնի բարելավումը, նրանց գաղափարական և բարոյական հատկանիշների էլ ավելի բարձրացումը։ Վ. Ի. Լենինն առաջ էր քաշում կուսակցության շարքերն ընդունվողների նկատմամբ բարձր պահանջկոտություն ցուցաբերելու հարցը և նշում, «որ կուսակցության ամեն մի անդամ պատասխանատու է կուսակցության համար և կուսակցությունը պատասխանատու է յուրաքանչյուր անդամի համար...»[8]։

Ելնելով ՍՄԿԿ XXV և XXVI համագումարների որոշումներից, սկզբնական կուսակցական կազմակերպություններն էլ ավելի են ուժեղացրել ուշադրությունը ՍՄԿԿ անդամության շարքերն ամրապնդելու հարցի վրա։ Այժմ ավելի շատ հաշվի է առնվում ոչ միայն ՍՄԿԿ շարքերն ընդունվողի արտադրական-ծառայական բնութագիրը, այլ նաև հասարակական կյանքում նրա ակտիվությունը։

ՍՄԿԿ բնութագրման համար կարևոր է նաև նրա ազգային կազմը։ Կուսակցությունն իր շարքերում միավորում է տարբեր ազգությունների պատկանող մարդկանց։ Դա նշանակում է, որ նա ամուր կանգնած է պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ազգերի հավասարության, ժողովուրդների եղբայրության և բարեկամության դիրքերի վրա։ Դրա հետ միասին ազգային հանրապետությունների կուսակցական կազմակերպություններն իրենց կազմով դառնում են էլ ավելի համազգային։

Վ. Ի. Լենինը կոմունիստական կուսակցության ղեկավար դերի պրակտիկ իրագործումը կապում էր Կենտկոմի արդյունավետ գործունեության հետ։ ՍՄԿԿ Կենտկոմը, նրա քաղբյուրոն և քարտուղարությունը վերջին տարիներին աշխատեցին մեծ ակտիվությամբ ու լարվածությամբ և ցույց տվեցին, թե ինչպես պետք է կյանքի պահանջներին համապատասխան կազմակերպել կուսակցության գործունեությունը։

Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում, «Կոմունիստական շինարարության մեծ ու բազմազան խնդիրների լուծման գործում առաջնահերթ դեր է պատկանում սկզբնական կուսակցական կազմակերպություններին։

Ներկայումս ՍՄԿԿ-ն ունի 414 հազար սկզբնական, 457 հազար արտադրամասային կուսկազմակերպություն...»[9]։ Դրանց մարտունակությունից ու նախաձեռնությունից է մեծապես կախված կուսակցության քաղաքականության պրակտիկ իրագործումը, պետական պլանների և առաջադրանքների կատարումը, աշխատավորության կոմունիստական դաստիարակությունը։ Դրանց

---

7 «Политика КПСС—марксизм-ленинизм в действии», М., 1976, с. 473.

8 Վ. Ի. Լենին, Նկ, հ. 7, էջ 363։

9 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 116։

միջոցով է կուսակցությունն ամրապնդում կապերը մասսաների հետ, ուժեղացնում իր ազդեցությունը նյութական և հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում։

Զարգացած սոցիալիզմի պայմաններում ՍՄԿԿ ղեկավար դերի աճի մյուս կարևոր պայմանը կուսակցության կուռ կազմակերպվածությունն է, նրա կազմակերպական կառուցվածքի գլխավոր սկզբունքի՝ դեմոկրատական ցենտրալիզմի, ըստ ամենայնի ամրապնդումն ու զարգացումը։ Միայն նրա խստագույն պահպանումը, նրա պրակտիկ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է, որ ապահովում են ամբողջ կուսակցության և նրա յուրաքանչյուր անդամի լիարյուն գործունեությունը։ Այն նաև հնարավորություն է տալիս կենտրոնական ղեկավարությունն օրգանապես զուգակցել տեղական նախաձեռնության հետ, զարգացնել կոլեգիալությունը, ամրապնդել կուսակցության շարքերի միասնությունը։

Կուսակցության ղեկավար դերի բարձրացման գործոններից է նաև կադրային քաղաքականությունը, որի ճիշտ լուծումը կուսակցության գործունեության հաջողության գրավականն է։ Դրա միջոցով կուսակցությունը ներգործում է մեր հասարակական զարգացման ընթացքի վրա։ Սովետական ժողովուրդն այժմ իրագործում է մասշտաբներով հզոր սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներ, շատ արագ տեմպերով է ընթանում գիտատեխնիկական պրոցեսը, գնալով է՛լ ավելի են բարդանում արտադրական և հասարակական պրոցեսների կառավարումը։ Հաշվի առնելով զարգացած սոցիալիզմի պայմաններում հանդես եկած բազմապիսի խնդիրների լուծման անհրաժեշտությունը, կուսակցությունը մշակել և տեսականորեն հիմնավորել է իր կադրային քաղաքականությունը։

Կադրերի ընտրության, տեղաբաշխման և դաստիարակության հարցերը միշտ էլ եղել են ՍՄԿԿ-ի, նրա Կենտկոմի և կուսակցական տեղական մարմինների հոգատարության առարկան։ Իրագործելով XXV և XXVI համագումարների որոշումները, կուսակցությունը կատարելագործում է կադրերի հետ տարվող աշխատանքները։

ՍՄԿԿ Կենտկոմի «Բելոռուսիայի կուսակցական կազմակերպության աշխատանքները գաղափարական կադրերի ընտրության և դաստիարակության ուղղությամբ» 1975 թ. ընդունած որոշումը մեկ անգամ ևս ընդգծեց մեր պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կադրերի հետ տարվող նպատակասլաց և համառ աշխատանքի նշանակությունը։

Կադրային քաղաքականության իրականացման ուղղությամբ ՍՄԿԿ-ն ընթացիկ ժամանակամիջոցում նոր, նշանակալի հաջողությունների է հասել։ Ղեկավար աշխատանքի են առաջ քաշվել երիտասարդ, խոստումնալից կադրեր, որոնք պրակտիկ աշխատանքում իրենց դրսևորում են կազմակերպական լավագույն կողմերով։ Ղեկավար կադրերի կազմում, որպես կարևորագույն որակական փոփոխություն, կարելի է նշել մասնավորապես այն, որ զգալիորեն աճել է նրանց հանրակրթական, քաղաքական և մասնագիտական պատրաստականության մակարդակը։ Բավական է ասել, որ 1976 թ. տվյալներով միութենական հանրապետությունների կենտկոմների, երկրկոմների և մարզկոմների քարտուղարների 99,5%-ը բարձրագույն կրթություն ունեին, իսկ

40%-ը՝ կուսակցական-քաղաքական կրթություն[10]։ Այդ կատեգորիայի կադրերի մեջ քիչ չէ նաև դիտական աստիճան և կոչում ունեցողների թիվը։

Կուսակցական բարձրագույն օղակներում զգալիորեն աճել է տնտեսության այն ճյուղերի մասնագետների թիվը, որոնք ավելի բնորոշ են տվյալ մարզին, երկրամասին կամ հանրապետությանը։ Դա մեծ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության էլ ավելի արդյունավետ կուսակցական ղեկավարման ապահովման տեսակետից։ Կարևոր է նաև այն, որ մարզկոմների, երկրկոմների և միութենական հանրապետությունների կենտկոմների քարտուղարների երեք քառորդը, իսկ կուսակցության քաղկոմների ու շրջկոմների քարտուղարների երկու երրորդը ինժեներատեխնիկական, տնտեսագիտական, գյուղատնտեսական կրթություն ունեն[11]։ Նրանցից շատերն արտադրական մեծ փորձ են ձեռք բերել, ունեն նաև կուսակցական աշխատանքի պատկառելի ստաժ։ Վերջին տարիներին է՛լ ավելի ամրապնդվեցին նաև շրջանային և քաղաքային օղակների կուսակցական ղեկավար կադրերը։ Կուսակցական մարմինների կազմում անընդհատ ավելանում է բանվորների և կոլտնտեսականների թիվը։ Այժմ փաստորեն բոլոր շրջկոմներում, քաղկոմներում և մարզկոմների ու երկրկոմների մեծ մասում բյուրոյի անդամ են բանվորներ ու կոլտնտեսականներ։ Այս բոլորը, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, նորություն և թարմություն են մտցնում կուսակցական ղեկավար մարմինների աշխատանքում, նպաստում են մասսաների հետ նրանց կապի ամրապնդմանը, աշխատավորության աչքում նրանց դարձնում են ավելի հեղինակավոր և դրա հետ միասին հնարավորություն են ընձեռում կոմունիստական շինարարության տարբեր բնագավառների համար բանվորների և կոլտնտեսականների շրջանից առաջ քաշել ղեկավար կադրեր։

Կուսակցությունը ձգտում է, որպեսզի համարձակ կերպով ղեկավար աշխատանքի առաջ քաշվեն նաև կանայք։ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող բոլոր մասնագետների մեջ կանանց տոկոսը 1976 թ. կազմում էր 59։ Մոտ 2,5 հազար կանայք 1976 թ. տվյալներով միութենական հանրապետությունների կենտկոմների, երկրկոմների, մարզկոմների, քաղկոմների և շրջկոմների քարտուղարներ էին[12]։ Շատ կանայք ղեկավարում են արդյունաբերական ձեռնարկություններ, դիտական հիմնարկներ, կոլտնտեսություններ, պետական տնտեսություններ և այլն։ Չնայած այս հաջողություններին, ՍՄԿԿ XXVI համագումարը պահանջեց է՛լ ավելի լուրջ ուշադրություն դարձնել կին ղեկավար կադրերի պատրաստման գործին։

Կուսակցությունը միշտ էլ լուրջ ուշադրություն է դարձրել կադրերի պատրաստման հարցերին։ Մեր կուսակցությունը կադրերի պատրաստման հիանալի ավանդույթներ ունի։ Հայտնի է, որ դեռևս 1911 թ. Վ. Ի. Լենինը Փարիզի մերձակայքում՝ Լոնժյումո փոքրիկ բնակավայրում, պրոֆեսիոնալ հեղափոխականների համար կազմակերպեց առաջին կուսակցական դպրոցը։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակից հետո հիմնադրվեց Յա. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանը, որը մեծ դեր խաղաց ղեկավար աշխատողների պատրաստման գործում։ Որպես հերթական կարևոր խնդիր մնում է կադրերի

---

10 «Актуальные вопросы политики КПСС», с. 325.

11 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 117։

12 «Политика КПСС—марксизм-ленинизм в действии», с. 495.

ուսուցման բարելավումը։ Հաշվի առնելով այդ խնդրի լուծման անհրաժեշտությունը, կուսակցությունը կատարելագործում և զարգացնում է ուսումնական հաստատությունների ցանցը։ Այժմ նրա կազմի մեջ են մտնում հասարակական գիտությունների ակադեմիան, ՍՄԿԿ Կենտկոմին կից կուսակցական բարձրագույն և հեռակա բարձրագույն դպրոցները, հանրապետական և միջմարզային 14 բարձրագույն կուսակցական դպրոցներ։ Վերջին տասնամյակներում տարբեր կուսակցական ուսումնական հաստատություններ ավարտել են շուրջ 220 հազար մարդ, իսկ 1980/81 ուստարում՝ 32 հազար մարդ[13]։ Ավելի քան 240 հազար կուսակցական, սովետական և գաղափարական աշխատողներ անցել են տարբեր դասընթացներ և այժմ հաջողությամբ աշխատում են կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպություններում, գաղափարական ճակատի տարբեր բնագավառների ղեկավար պաշտոններում։ Այլ խոսքով ասած, ստեղծվում են բոլոր պայմանները, որպեսզի ղեկավար կադրերը մշտապես բարձրացնեն իրենց տեսական մակարդակը։ Ինչպես նշեց ՍՄԿԿ XXVI համագումարը, կուսակցական իսկական ղեկավար աշխատող դառնալու համար բավական չէ միայն կուսակցական, քաղաքական կրթություն ստանալը։ Միաժամանակ անհրաժեշտ է, որ կուսակցական ղեկավար աշխատանքի առաջ քաշվողները կոփվեն պրակտիկ աշխատանքի բովում, շփվեն մասսաների հետ և անձնական փորձով իմանան, թե ինչ խոհերով են ապրում երկրի բանվորությունը, գյուղացիությունը, մտավորականությունը, իմանան նրանց կյանքն ու պահանջմունքները, նրանց հետաքրքրությունները։ Ելնելով դրանից, համագումարը պահանջեց հասնել այն բանին, որ, որպես կանոն, այդպիսի դպրոց՝ կյանքի, մասսաների մեջ պրակտիկ աշխատանքի դպրոց, անցնեն այն բոլոր կոմունիստները, որոնց կուսակցությունը ղեկավար աշխատանքի առաջքաշման ռեզերվ է համարում[14]։

Կադրերի նկատմամբ հոգատար և ուշադիր վերաբերմունքը ՍՄԿԿ-ն զուգակցում է հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության և պահանջկոտության բարձրացմամբ։ ՍՄԿԿ XXVI համագումարը նշեց, որ արդի պայմաններում կադրերի նկատմամբ ներկայացվող նախկին պահանջներին՝ քաղաքական հասունությանը, մարքս-լենինյան ուսմունքին տիրապետելուն, մասնագիտական պատրաստականությանը և կազմակերպական ու գործնական հատկանիշներին, այժմ ավելանում են այլ պահանջներ՝ կադրերի տնտեսագիտական գիտելիքների հարստացում, ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի միտումների տիրապետում, կոլեկտիվի տրամադրության ուսումնասիրում, առաջարկությունների և կարծիքների, պահանջմունքների ու հարցադրումների հաշվի առնում։ Համագումարը գտավ, որ ղեկավար աշխատողը պետք է գտնվի ոչ միայն ժամանակակից տեխնիկական և տնտեսագիտական գիտելիքների բարձրության վրա, ոչ միայն իմանա արտադրությունը, այլև լինի դաստիարակ, այսինքն կարողանա ղեկավարել մարդկանց, կոլեկտիվը[15]։ Գնալով կատարելագործվում է կադրերի գնահատման չափանիշների սիստեմը, չափանիշներ, որոնք վերաբերում են ղեկավար գործունեության տարբեր մակարդակներին և տեսակներին։ Այսպես, կադրային հարցերի լուծ-

13 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 118։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում։

ման ժամանակ ավելի լայն հնչեղություն առաջ բերեց նաև ատեստացիայի մտցնելը, որը, անշուշտ, կադրերի առաջքաշման ժամանակ ապահովում է ավելի օբյեկտիվ, բազմակողմանի մոտեցում։

ՍՄԿԿ ղեկավար դերի ապահովման և բարձրացման կարևոր միջոցներից են նաև քննադատությունն ու ինքնաքննադատությունը, որոնք կուսակցության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից են։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում, երբ մեծացել և աճել են կուսակցության և ժողովրդի կողմից լուծվող խնդիրների մասշտաբներն ու բարդությունը, երբ իրագործվում է անցումը ինտենսիվ մեթոդների և արմատական շրջադարձ է կատարվում գործունեության ոլորտների որակական ցուցանիշների մեջ, քննադատության և ինքնաքննադատության դերն էլ ավելի է ուժեղանում։ Քննադատության և ինքնաքննադատության նկատմամբ կուսակցության կողմնորոշումը գիտական հիմնավորվածության բնույթ ունի։ Այդ դիրքորոշումը ելնում է պատմական պրոցեսի մատերիալիստական ըմբռնումից։ Քննադատությունն ու ինքնաքննադատությունը մասսաներին օգնում են զարգացնել ստեղծագործական նախաձեռնությունը, նպաստում են սոցիալիստական հասարակարգի անսպառ ռեզերվների ու հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը։ Հետևաբար, հեղափոխական կուսակցության համար քննադատական մեթոդը նրա տեսական և պրակտիկ գործունեության հիմք է ծառայում, դառնում իրականության ճանաչման և փոփոխման կարևոր միջոց։ Վ. Ի. Լենինը կուսակցության լրջության հատկանիշը, նրա քաղաքական հասունության և ուժի վկայությունը համարում էր սխալների անկեղծ ընդունումը և ուղղումը։ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ՍՄԿԿ-ն մշակեց ներկուսակցական կյանքի այնպիսի նորմաներ, որոնք անհրաժեշտ պայմաններ են ստեղծում քննադատության և ինքնաքննադատության լայն ծավալման համար, օգնում են բոլոր կոմունիստներին ընդգրկվելու թերությունների բացահայտման և ուղղման գործում։ Քննադատության և ինքնաքննադատության ակտիվ և լայն կիրառումը պայքարի տարբեր փուլերում կուսակցությանը նոր ուժ տվեցին, նոր հորիզոններ բացեցին սովետական ժողովրդի առաջ՝ հաջողությամբ իրականացնելու հեղափոխական վերափոխությունները։

Քննադատական մոտեցման նշանակությունը սուր կերպով ընդգծվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1975 թ. ընդունած «Տամբովի մարզային կուսակցության կազմակերպություններում քննադատության և ինքնաքննադատության վիճակի մասին» որոշման մեջ։ Կենտկոմը մարզկոմի ուշադրությունը հրավիրեց տեղ գտած թերությունների վրա, երբ պլենումներում, կուսակցական ժողովներում տրված զեկուցումներում ուշադրության են արժանացել և միշտ ընդգծվել են միայն գործունեության դրական կողմերը, սակայն թերություններն անուշադրության են մատնվել, չեն բացահայտվել դրանց ծնող պատճառները և վերացման ուղիները։

Կուսակցության ղեկավար դերի աճի կարևոր միջոցներից է նաև մասսաների հետ ունեցած կապի ամրապնդումը։ Երբ մշակված է քաղաքականության ընդհանուր գիծը և որոշված են այն իրականացնելու հիմնական լոզունգները, կուսակցական ղեկավարման հերթական խնդիր է դառնում դրանց ճշտությունը ժողովրդական մասսաներին համոզելը, դրանք նրանց սեփականությունը դարձնելը։ Իսկ դրա համար կուսակցությունը պետք է կարողանա կապվել, մերձենալ, ձուլվել մասսաներին։ Կուսակցությունը կկորցնի իր ա-

վանգարդային դերը, եթե պատնեշվի մասսաներից, հանդես բերի աղանդավորություն, կտրվածություն։ «Ավանգարդը միայն այն ժամանակ է կատարում ավանդարդի խնդիրները,— գրել է Վ. Ի. Լենինը,— երբ նա կարողանում է չկտրվել իր ղեկավարած մասսայից, այլ իսկապես առաջ տանել ամբողջ մասսային»[16]։ Լենինյան ավանդներին համապատասխան, ՍՄԿԿ XXVI համագումարը մեծ ուշադրություն դարձրեց կուսակցության և ժողովրդի կապերի հետագա ամրապնդմանը։

Կուսակցությունը թանկ է գնահատում ժողովրդի վստահությունը։ Նա դրանից նոր եռանդ ու խանդավառություն է քաղում։ ՍՄԿԿ XXVI համագումարում Լ. Ի. Բրեժնևը նշեց աշխատավորների նամակների և առաջարկությունների՝ որպես մասսաների հետ կուսակցության կենդանի կապի կարևորագույն միջոցի, հսկայական նշանակությունը[17]։ Համագումարի հասցեով ստացվեցին բազմաթիվ նամակներ, ողջույններ, աշխատանքային զեկույցներ, առաջարկություններ, որոնցից շատերն օգտագործվեցին համագումարի փաստաթղթերը նախապատրաստելիս։ Աշխատավորների նամակներն ու առաջարկությունները կուսակցական կազմակերպություններին օգնում են իրազեկ լինելու մասսաների իղձերին ու ձգտումներին, ավելի լավ կողմնորոշվելու իրադրության մեջ, ճիշտ մշակելու ՍՄԿԿ լենինյան կուրսին համապատասխանող որոշումներ։

Կուսակցության XXVI համագումարը նորից համոզիչ կերպով հաստատեց, որ սովետական հասարակության հզոր ուժի աղբյուրը եղել և մնում է կուսակցության և ժողովրդի անխախտ միասնությունը։ Կուսակցությունը իր հեղափոխական վերափոխիչ գործունեության բարձրագույն իմաստը տեսնում է ժողովրդին ծառայելու մեջ։ ՍՄԿԿ XXVI համագումարը մեկ անգամ ևս ընդգծեց, որ կուսակցության քաղաքական մոտեցման ելակետն «Ամեն ինչ հանուն մարդու, մարդու բարօրության համար» ծրագրային անշեղ պահանջն է։ «Կոնկրետ մարդու նկատմամբ, նրա կարիքների և պահանջմունքների նկատմամբ կոնկրետ հոգատարությունը,— ասվեց ՍՄԿԿ XXVI համագումարում,— կուսակցության տնտեսական քաղաքականության սկիզբն է և վերջակետը»[18]։ Ահա կուսակցության հենց այդ մեծագույն, հումանիստական նպատակը նրան հարազատ է դարձնում, նրա հետ մերձեցնում, ամուր և անխզելի կապերով միավորում սովետական բոլոր ժողովուրդներին։

Համագումարն ընդգծեց, որ կուսակցական մարմինների և ժողովրդական մասսաների նորմալ փոխհարաբերությունների կարգավորման կարևոր պայմաններից է նաև աշխատավորական մասսաներին կուսակցական կոմիտեների կողմից ինֆորմացիա տալը։

Այսպիսով, ժողովրդական լայն մասսաների հետ կուսակցության անխզելի կապի ամրապնդումը և նրանց իր շուրջը համախմբելու հմտությունը կուսակցության ուժի և անպարտելիության աղբյուրն են։ Կուսակցության գործունեության մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում նաև աշխատավորական լայն մասսաների դաստիարակության հարցերը՝ նրանց պատրաստականության աստիճանը, կամքը և կոմունիզմ կառուցելու կարողությունը։ Այդ հար-

---

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 266։

17 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 121։

18 Նույն տեղում, էջ 80։

ցերը զարգացած սոցիալիզմի պայմաններում առանձնահատուկ հրատապություն են ձեռք բերում, քանի որ հասարակական կյանքում էապես աճում է դաղափարական գործոնի դերը։

ՍՄԿԿ XXVI համագումարը վերլուծեց և ընդհանրացրեց վերջին տարիներին կուսակցության ձեռք բերած գաղափարական գործունեության փորձը։ Ամբողջությամբ վերցրած, մասսաների գաղափարական-քաղաքական դաստիարակության ընագավառում մեծ առաջադիմություն է տեղի ունեցել։ Սակայն սովետական մարդկանց նոր սերնդի ներգրավումը հասարակական ակտիվ գործունեության մեջ, գիտության և տեխնիկայի զարգացման կապակցությամբ սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունը, ժողովրդի գիտակցության աճն ու ինֆորմացիոն զինվածությունը, միջազգային հարաբերություններում օրավուր տեղի ունեցող փոփոխությունները կուսակցության առաջ ավելի բարձր պահանջներ են դնում։ Բազմակողմանիորեն հաշվի առնելով այդ ամենը, կուսակցությունն առանձնահատուկ նշանակություն է տալիս դաստիարակության գործի նկատմամբ համապարփակ մոտեցմանը։ Այդպիսի մոտեցումը ենթադրում է դաղափարական-դաստիարակչական աշխատանքների մեջ աղգաբնակչության նոր շերտերի ու խմբերի ներգրավումը։

Այսպիսով, ինչպես միշտ, այնպես էլ զարգացած սոցիալիզմի պայմաններում, չկա սովետական հասարակական կյանքի մի բնագավառ, քաղաքական, տնտեսական և կուլտուրական բնույթի մեծ թե փոքր որևէ վերափոխություն, որի նախաձեռնողը, կազմակերպիչը և ղեկավարը չլինի կոմունիստական կուսակցությունը, որն անցել է հերոսական պայքարի, ծանր փորձությունների և պատմական հաղթանակների փառապանծ ուղի։ Սկսելով մարքսիստական փոքր խմբակներից, նա վերածվեց սովետական սոցիալիստական հզոր տերության ղեկավարող մեծ ուժի։ Կուսակցությունը մեր երկրի բազմազգ ժողովուրդներին առաջնորդեց երեք հեղափոխություններում, մշակեց մեր երկրում կապիտալիզմը կոմունիզմով փոխարինելու ուղիները, նրա ղեկավարությամբ է կանխագծվել և կենսագործվել սոցիալիզմի կառուցումը, ապահովվել նրա համաշխարհային-պատմական հաղթանակը։ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, ինչպես մեր երկրի զարգացման նախորդ բոլոր փուլերում, այնպես էլ զարգացած սոցիալիզմի պայմաններում սովետական հասարակության առաջնորդն ու ղեկավարն է։

ВОЗРАСТАНИЕ РУКОВОДЯЩЕЙ РОЛИ КПСС В УСЛОВИЯХ РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

ГЕВОРК ВАРДГЕСЯН

Резюме

В последнее время в теории и практике мирового социализма важное значение приобрели вопросы, связанные со строительством развитого социалистического общества. Среди этих вопросов наиболее важное политическое, теоретическое и практическое значение приобрело

положение, выдвинутое XXV и XXVI съездами КПСС о возрастании руководящей роли КПСС в период развитого социализма. XXVI съезд КПСС отметил, что современный этап коммунистического строительства предъявляет новые требования к руководящей роли Коммунистической партии во всех сферах общественной жизни.

В статье особое внимание уделяется следующим вопросам проблемы: 1. внутренние и внешние причины, обусловливающие возрастание руководящей роли КПСС в период развитого социализма; 2. основные направления и способы, обеспечивающие возрастание руководящей роли КПСС в современных условиях.